ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

---------- 2019 թ. N ------- Ա

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻՍԱԿ ՀԱՐԹԵՆՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 457-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ և 7-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող Միսակ Սամվելի Հարթենյանին (ծնված՝ 1998 թվականի օգոստոսի 16-ին, հասցեն՝ ք. Երևան, Վեգների փողոց 2/7) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տալ տարկետում մինչև 2021 թվականի ամառային զորակոչը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻՍԱԿ ՀԱՐԹԵՆՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈԶԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

Միսակ Սամվելի Հարթենյանը 2019 թվականին ավարտում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի բակալավրիատի գրաֆիկայի բաժինը: Չնայած երիտասարդ տարիքին՝ հանդիսանում է Հայ կերպարվեստի հիմնադրամի պատվավոր անդամ:

Մեծ ներդրում ունի հայ կերպարվեստը հանրահռչակելու և հայ մշակույթը զարգացնելու գործում: Ակտիվորեն մասնակցում է Հայաստանում և արտասահմանում կազմակերպվող ցուցահանդեսներին: 300 գեղանկարչական աշխատանքների և 2 գրքի հեղինակ է:

Ունեցել է անհատական ցուցահանդեսներ Հայաստանում՝

1) 2010 թ. Երևանի Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային թատրոն,
2) 2011 թ. Երևանի գեղագիտության ազգային կենտրոն,
3) 2012 թ. Երևանի Հովհաննես Թումանյանի թանգարան,
4) 2013 թ. Հայաստանի նկարիչների միություն,
5) 2016 թ. Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Ալբերտ և Թովէ Բոյաջյանների ցուցասրահ,
6) 2016թ. Հայաստանի նկարիչների միություն,
7) 2019թ Ժամանակակից արվեստի թանգարան:

Պարբերաբար մասնակցել է միջազգային հեղինակավոր ցուցահանդեսների՝

1) 2010 թ. «Մոսկվայի տուն» ՄԳԿ ցուցահանդես 1-ին մրցանակ,
2) 2016 թ. «Միխայիլ Սավիտսկի» թանգարան, Մինսկ, Բելառուս,
3) 2016 թ. «Վերնատուն» ցուցասրահ, Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստանի Դաշնություն,
4) 2018 թ. «Կառլլևոնի» ցուցասրահ, նվիրված կանանց և մայրության տոնին, Երևան, Հայաստան,
5) 2018 թ. «Նկարիչների կենտրոնական տուն», նվիրված էրեբունի-Երևան 2800-ամյակին, Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն,
6) 2018 թ. «Տապան» հայկական թանգարան, նվիրված էրեբունի-Երևան 2800 ամյակին, Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն,
7) 2018 թ. «Սահակ Մեսրոպ» մշակութային կենտրոն, նվիրված էրեբունի- Երեան 2800 ամյակին, Մարսել, Ֆրանսիա,
8) 2018 թ. «Թատերական հրապարակ» 12-րդ տաղավար, ցուցահանդես նվիրված Ֆրանկո-ֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովին, Երեան, Հայաստան,
9) 2019թ. «Մարսելի քաղաքապետարանի ցուցասրահ» նվիրված Շառլ Ազնավուրին, Մարսել, Ֆրանսիա:

2019 թվականին նախատեսվում են ցուցադրություններ Իտալիայում, Չինաստանում, Քուվեյթում և ԱՄԷ-ում:

Իրավական ակտի ընդունումը թույլ կտա Մ. Հարթենյանին կատարելագործել մասնագիտական հմտությունները և հանրահռչակել հայկական կերպարվեստը միջազգային հարթակներում:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 457-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի համաձայն՝ 2019 թվականի մայիսի 13-ին ՀՀ մշակույթի նախարարությունում տեղի է ունեցել մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն տվող հանձնաժողովի նիստ:

Նիստի օրակարգում քննարկվել է նաև Մ. Հարթենյանի դիմումը, ներկայացված փաստաթղթերը և ծավալած գործունեությունը:

Հանձնաժողովը կայացրել է դրական եզրակացություն Մ. Հարթենյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զորահավաքային նախապատրաստության բաժնի (մշակույթ) կողմից:

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

«Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **Միսակ Հարթենյանին** շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունմամբ հնարավորություն կտրվի Մ. Հարթենյանին շարունակել ծավալած մշակութային գործունեությունը, էլ ավելի կատարելագործել ձեռք բերած մասնագիտական հմտությունները և ներկայացնել հայկական մշակույթն ու կերպարվեստը Հայաստանում և արտերկրում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻՍԱԿ ՀԱՐԹԵՆՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող Միսակ Հարթենյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

«ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻՍԱԿ ՀԱՐԹԵՆՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող Միսակ Հարթենյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում եկամուտների նվազեցում կամ ծախսերի ավելացում չի առաջացնում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող Միսակ Հարթենյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների

h/h	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացու-թյուն	Կատարված փոփոխությունը
1.	ՀՀ պաշտպանության նախարարության 21.05.2019 թ. N ՊՆ/510/604-2019 գրություն	«Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող Միսակ Հարթենյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չունեն:	Ընդունվել է ի գիտություն:	
2.	Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք (www.e-draft.am)	Դիտողություններ և առաջարկութ-յուններ չեն եղել:	Ընդունվել է ի գիտություն:	